Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-1350-30.04.2026-ՏՏԳԾ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկ (փոփոխություն, լրացում)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկի ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	ՀՀ Կառավարություն	**Նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով**	Առաջարկել է «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 39-41-րդ կետերով.	Ընդունվել է Կատարվել է լրացում, ըստ այդմ հոդվածների համարակալումը և նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի հղումը վերանայվել է	Ընդունվել է

ՀՀ Կառավարություն	Նախագծի 1-ին հոդվածով օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի լրացումը շարադրել նոր բովանդակությամբ՝	«3.1) Կառավարության սահմանած կարգին համապատասխան՝ հանրային առողջության և շրջակա միջավայրի պահպանության նպատակով արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկի հաստատումը.»:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

ՀՀ ***Կառավարություն***	Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 6-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի նոր խմբագրությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.	«1) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված են Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ **Կառավարություն**	Նախագծի 3-րդ հոդվածի 3-րդ կետով օրենքի 6.1-ին հոդվածի 9-րդ մասի 1-ին կետի նոր խմբագրությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.	«1) ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը ներառված են Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
ՀՀ **կառավարություն**	Նախագծի 4-րդ հոդվածով օրենքի 6.2-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի նոր խմբագրությունը շարադրել հետևյալ բովանդակությամբ.	«3) պեստիցիդը կամ դրա ազդող նյութը, համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը, ինչպես նաև ագրոքիմիկատը կամ դրա բաղադրիչ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված պեստիցիդների կամ դրանց ազդող նյութերի, համագործիչ կամ օժանդակ նյութերի և ագրոքիմիկատների կամ դրանց բաղադրիչ նյութերի ցանկում.»:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծական վարչություն	Նախագծի 5-րդ հոդված	Առաջարկել է Նախագծի 5-րդ հոդվածի վերնագիրը հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը:	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական եւ վերլուծական վարչություն	Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մաս	Առաջարկել է «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկվել է լրացնել «նորմատիվ իրավական» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված հասկացությունը	Ընդունվել է Կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է